Այսօր տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հերթական նիստը, որը վարել է հանձնաժողովի նախագահ Սիմոն Տեր-Սիմոնյանը:

Հանձնաժողովը քննարկել է 30 բարեգործական ծրագիր:

Մասնավորապես, քննարկվել և հաստատվել են՝

«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հադրութի շրջանի Դրախտիկ գյուղի համայնքային կենտրոնի կահավորում», «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք գյուղի դպրոցի կահավորում» և «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի «Երեխաների տուն» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման 2-րդ փուլ» ծրագրերը.

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Հին Վեհարանի հատակի պատրաստում», «Հին Վեհարանի շենքի հակասառեցման համակարգի տեղադրում», «Վարչական շենքի հակասառեցման համակարգի տեղադրում» , «Սուրբ ավետարանի պատառիկներ ալբոմ-օրացույցի տպագրություն» , «Սինոդի շենքի և գեղարվեստի դպրոցին կից ավտոկայանատեղիի կառուցում» և «Տպարանի շենքին կից հատվածի ասֆալտապատում» ծրագրերը.

Ամերիկայի հայ օգնության ֆոնդի հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ», «Կրթավճարներ», «Հայաստանի հայրազուրկ երեխաների օգնություն» և «Բարեգործական ճաշարաններ» ծրագրերը.

«Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամի կողմից 2013 թվականին իրականացվելիք սոցիալական բարեգործական ծրագիր.

«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապանի տարածաշրջանի Եղվարդ, Ագարակ և Վերին Խոտանան համայնքներում խմելու ջրագծերի բարեկարգում», «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապանի տարածաշրջանի Կապան և Գեղի համայնքներում նախադպրոցական հաստատությունների ենթակառուցվածքների բարելավում ու երեխաների համար ժամանցի հնարավորությունների ստեղծում», «Կրթության պայմանների բարելավում Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան քաղաքի թիվ 4,8,10 և 12 դպրոցներում», «Փոքր ջերմոցների տեղադրում Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապանի տարածաշրջանի Շիկահող և Ծավ գյուղական համայնքների հինգ ընտանիքների», «ՈՒսումնա-փորձնական ջերմոցների հիմնում Հայաստանի Հանրապետության Սյունիքի

մարզի Կապան քաղաքի թիվ 6 և 16 դպրոցներում», «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան համայնքի թիվ 1 մանկապարտեզի և Ազատամուտ համայնքի մանկապարտեզի մեկական խմբասենյակի պատուհանների ու դռների փոխարինում» և «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ակունք, Ծովակ և Կարճաղբյուր համայնքների մանկապարտեզների ջեռուցում» ծրագրերը.

«Սուրբ Կամիլլո» բարեգործական հիմնադրամի կողմից 2013-2015 թվականներին իրականացվող ծրագիր.

«Ջերմիկ անկյուն» հիմնադրամի կողմից իրականացվող «Ջերմիկ անկյուն» խմբային տան ծրագիր.

«Տիրամայր Հայաստանի Կուսաստան» բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող «Պողոսյան Կրթահամալիր» և «Ամառային ճամբար» ծրագրերը.

«Օյունջյան» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Վարդուհի» արվեստի կենտրոնի նախագծում» ծրագիր.

«Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագիր.

«Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Ավ.Իսահակյանի անվան կենտրոնական գրադարան» ՀՈԱԿ-ին համակարգիչների նվիրատվություն» ծրագիր.

«Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից 2013 թվականի ընթացքում իրականացվող ծրագիր.

Նիստում քննարկվել և հաստատվել են նաև նախկինում հաստատված ծրագրերի շրջանակներում իրականացվող հարակից գործարքներ և տարբեր կազմակերպությունների հասցեներով ստացված բարեգործական բեռների ներմուծման ծրագրեր: